ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/114

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.07.2018թ. թիվ 04/26-3/13806-18 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00071045) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության 30.07.2018թ թիվ ԱԹ/10394-18 գրության հիման վրա, 09.07.2018թ. նախաձեռնել է «Խաչպար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 30.07.2018թ թիվ ԱԹ/10394-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ս.թ. հուլիսի 3-ին քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված N «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-91» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել է ՀՀ, ք.Երևան, Ռաֆֆու 33/7 հասցեում գրանցված «Խաչպար» ՍՊ (հեռ. 091 45 90 45, e-mail: khachparllc@gmail.com) ընկերությունը:

Հայտերի բացման նիստում «Խաչպար» ընկերության հայտը գնահատվել է բավարար և հիմք ընդունելով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը «Խաչպար» ՍՊ ընկերությունը 9-րդ և 12-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով ս.թ. հուլիսի 12-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ուղարկված հարցմանն ի պատասխան՝ 17.07.2017թ. ստացված եզրակացության համաձայն, «Խաչպար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 1,803,367 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հանձնաժողովը, «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով ս.թ. հուլիսի 18-ին հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստում «Խաչպար» ՍՊ ընկերության հայտը մերժել է»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 03.08.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Խաչպար» ՍՊԸ-ն հիմնադրվել է 04.02.2002թ. և մինչ օրս զբաղվում է դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների, ատամնաբուժական գործիքների, ախտահանիչ միջոցների մեծածախ առևտրով, որը հիմնականում իրականացնում է տարբեր բուժհաստատությունների կողմից կազմակերպված մրցույթներին մասնակցելու, հաղթող ճանաչվելու և պատշաճ կերպով մատակարարումներ իրականացնելու միջոցով:

«Խաչպար» ՍՊԸ-ն պետական գնումների գործընթացներին մասնակցել է 06.12.2004թ. թիվ ՀՕ-160-Ն, 22.12.2010թ. թիվ ՀՕ-206-Ն և 16.22.2016թ. թիվ ՀՕ-21-Ն «Գնումների մասին» ՀՀ օրենքների սահմանած պայմաններով և այս շուրջ 15 տարվա ընթացքում չի եղել անգամ մի դեպք, որ «Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած լիներ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ս.թ. հունիսի 28-ի դրությամբ առաջացած ժամկետանց հարկային պարտավորությունները գոյացել են այն բանից հետո, երբ «Խաչպար» ՍՊԸ-ում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահի 2018թ. հունիսի 11-ի թիվ 3000656 Հանձնարարագրի հիման վրա իրականացվել են համալիր հարկային ստուգումներ 2015-2017 թվականների համար, որոնց ժամանակ անհրաժեշտություն է առաջացել ճշտումներ կատարելու 2015-2017 թվականների հարկային հաշվետվություններում, ինչը որ կատարվել է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 2018թ. հունիսի 26-ին, ժամը 21:15-ից մինչև 21:19 ընկած ժամանակահատվածում:

Մինչև ճշտում ներկայացնելու օրը՝ 2018թ. հունիսի 25-ը ներառյալ, «Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ոչ միայն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ, այլև ունեցել է 553,515 /հինգ հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամի գերավճար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 19.07.2018թ. թիվ 1972 տեղեկանքի համաձայն, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.06.2018թ. ունեցած 1803367 /մեկ միլիոն ութ հարյուր երեք հազար երեք հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունները առաջացել են ճշտված հաշվետվությունների ներկայացման հետևանքով հաշվարկված 615,967 /վեց հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամի հարկային պարտավորությունների, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած 737,400 /յոթ

հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամի տույժերի և 450,000 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի տուգանքների գումարներից:

«Խաչպար» ՍՊԸ-ն 2018թ. հունիսի 29-ին ՀՀ Կենտրանական գանձապետարանի հաշվին է փոխանցել իր կողմից կատարված ճշտումների չափով գումարները՝ 2015թ. համար 2,220,000 /երկու միլիոն երկու հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, 2016թ. համար 410,000 /չորս հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ, որոնց արդյունքում՝ հունիսի 28-ից ընդամենը 1 օր հետո, ոչ միայն մարվել են բոլոր ժամկետանց հարկային պարտավորությունները, այլև առաջացել է 826,170 /ութ հարյուր քսանվեց հազար հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամի գերավճար:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ս.թ. հուլիսի 3-ին Քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված N «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-91» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար «Խաչպար» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է ս.թ. հունիսի 28-ին՝ թյուրիմացաբար կարծելով, որ հարկային պարտավորությունները ճշտվում են հայտերի բացման նիստի օրվա՝ հուլիսի 3-ի դրությամբ, և որ ս.թ. հունիսի 29-ին վճարելով հարկային պարտավորությունները, հուլիսի 3-ի դրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ն ժամկետանց պարտավորություններ ՀՀ պետբյուջեի նկատմամբ այլևս չի ունենա:

Այդ թյուրիմացության ապացույց կարող է հանդիսանալ այն, որ «Խաչպար» ՍՊԸ-ն կարող էր հունիսի 28-ին ներկայացված փաթեթը հետ վերցնել և նորից ներկայացնել ինչպես հունիսի 29-ին, այնպես էլ հուլիսի 2-ին և 3-ին՝ մինչև ժամը 11:00-ն, սակայն դա չի արվել, քանի որ թյուրիմացաբար կարծել ենք, որ հարկային պարտավորությունների ճշտման օր է համարվում հայտերի բացման նիստի օրը:

«Խաչպար» ՍՊԸ-ն հայցում է Ձեր և Պատվիրատու մեր գործընկերների ներողամտությունը՝ իր կողմից թույլ տրված թյուրիմացության համար, ինչպես նաև խնդրում է Ձեզ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ս.թ. հունիսի 28-ին եղած հարկային պարտավորությունները ընդամենը 1 օր հետո գերավճարներով մարվել են «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից, ուստի այդ ընդամենը 1 օրը հիմք չհամարել շուրջ 15 տարվա բարեխիղճ հարկատու «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում 730 օրով ներառելու՝ համար, և խնդրում ենք Ձեզ՝ մերժել «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը՝ հիմքերի բացակայության հիմքով»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Սմբատ Բալասանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.07.2018թ. թիվ 03/26-3/12414-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության 30.07.2018թ թիվ ԱԹ/10394-18 գրությունը, «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-91» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-91» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.07.2018թ. նիստի թիվ 3, 06.07.2018թ. նիստի թիվ 3, 12.07.2018թ. նիստի թիվ 4 և 18.07.2018թ. թիվ 5 արձանագրությունները, «Խաչպար» ՍՊԸ-ն 03.08.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությունը, «Խաչպար» ՍՊԸ-ի հայտի պատճենը.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար քիմիական նյութերի գնման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-91» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 9-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

«Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-91» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 03.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 9-րդ և 12-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները համապատասխանաբար կազմել են՝ 3,00,000 ՀՀ դրամ և 14,800,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 2018թ. հուլիսի 6-ի թիվ 3 արձանագրության 2.2 կետով որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովն 2018թ. հուլիսի 12-ի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ տեխնիկական խնդիրների պատճառով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումը չի ուղարկվել և որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 28.06.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 1,803,367 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 18.07.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրել է «Խաչպար» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը և նույն արձանագրության 2.2 կետով որոշել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ

մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2018-91» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման

մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության տնօրենը հավաստիացրեց, որ Ընկերության կողմից

մշտապես պատշաչ և ժամանակին կատարվել են հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարումները, իսկ ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության մեջ նշված՝ 1,803,367 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է այն բանից հետո, երբ Ընկերությունը, 28.06.2018թ. դրությամբ լինելով հարկային մարմնի կողմից համալիր ստուգման գործընթացի մեջ՝ 26.06.2018թ. տվել է 2015-2017 թվականների հարկային հաշվետվությունների ճշգրտում, ինչի մասին վկայում է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 19.07.2018թ. տրված թիվ 1972 տեղեկանքը, համաձայն որի «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 28.06.2018թ. ունեցած 1,803,367 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններն առաջացել են ճշտված հաշվետվությունների ներկայացման հետևանքով հաշվարկված 615,967 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած 737,400 ՀՀ դրամի տույժերի և 450,000 ՀՀ դրամի տուգանքների գումարներից:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից «Խաչպար» ՍՊԸ-ում համալիր հարկային ստուգում իրականացնելու ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.06.2018թ. թիվ 3000656 հանձնարարականը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 19.07.2018թ. «Խաչպար» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 28.06.2018թ. դրությամբ ունեցել է 1,803,367 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն (824,068 ՀՀ դրամ շահութահարկի գծով, 529,299 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով, և 450,000 ՀՀ դրամ տուգանքի և վնասի հատուցման գումար հանդիսացող ժամկետանց հարկային պարտավորություններ):

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 19.07.2018թ. «Խաչպար» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 29.06.2018թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 19.06.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 1,803,367 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավուրություն:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության 28.06.2018թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է 26.06.2018թ. կատարված՝ 2015-2017 թվականների հարկային հաշվետվությունների ճշգրտման արդյունքում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավություններն առաջացել են վերջինիս համար

չկանխատեսված հանգամանքների առաջացման, այլ՝ ոչ թե Ընկերության կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով, ուստի, նշված պայմաններում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների փաստի արձանագրումը չի կարող որակվել որպես Ընկերության կողմից իր հարկային պարտավորությունների չկատարման կամ անբարեխիղճ կատարման արդյունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.07.2018թ. թիվ 04/26-3/13806-18 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00071045) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ